ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 մայիսի 2011թ. թիվ 50 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 66-րդ, 116-րդ հոդվածներով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ, 25-րդ, 59-րդ և 68-րդ հոդվածներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին>> թիվ 1911-Ն որոշման /<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1218-Ն և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունիսի 21-ի թիվ 557 և 2006թ.նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 3-ի թիվ 687-Ն որոշումների խմբագրությամբ/,

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված միաձուլման պայմանագիրը:
2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը 16.05.2011թ. դրությամբ /կցվում է/:
3. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռը 16.05.2011թ. դրությամբ /կցվում է/:

4. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների մեծությունը 16.05.2011թ. դրությամբ 149,494,000 /հարյուր քառասունինը միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար/ դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված 1 հատ 5,000 /հինգ/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի հաշվեկշռային սկզբունքով հաշվարկված շուկայական արժեքը 23,840 /քսաներեք հազար ութ հարյուր քառասուն/ դրամի չափով:
5. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների մեծությունը 16.05.2011թ. դրությամբ 16,103,500 /տասնվեց միլիոն հարյուր երեք հազար հինգ հարյուր/ դրամի չափով և ընկերության կողմից տեղաբաշխված 1 հատ 5,000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի հաշվեկշռային սկզբունքով հաշվարկված շուկայական արժեքը 29,070 /քսանինը հազար յոթանասուն/ դրամի չափով:
6. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության միաձուլման միջոցով վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները:

ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության միաձուլման ճանապարհով ստեղծված ընկերության պետական գրանցումից հետո մեկամսյա ժամկետում միաձուլվող ընկերությունների կողմից կազմված և ընկերությունների հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերությունը և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունը հանձնում են, իսկ միաձուլման արդյունքում ստեղծված <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը ընդունում է միաձուլվող ընկերությունների առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:

Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա են հաստատման ՀՀ Տավուշի մարզպետի կողմից:

Միաձուլվող ընկերությունների կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առանց ձևի և սեփականատիրոջ փոփոխության սույն որոշման 9-րդ և 10-րդ կետերում սահմանված փոխարկման կարգերին համաձայն և բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառում կատարելու միջոցով:

ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպված են համարվում միաձուլման արդյունքում ստեղծված <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության պետական գրանցման պահից:

7. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերվող բոլոր /ներառյալ՝ վիճարկվող/ պարտավորությունների <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը:
8. Հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերվող բոլոր /ներառյալ՝ վիճարկվող/ պարտավորությունների <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցման ակտը:
9. Հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված միաձուլման պայմանագիրը, հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի հետևյալ փոխարկման կարգը <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի. ընկերության կողմից տեղաբաշխված թվով 6272 /վեց հազար երկու հարյուր յոթանասուներկու/ հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության նույն քանակով բաժնետոմսերի առանց անվանական արժեքի, ձևի և սեփականատիրոջ փոփոխության:
10. Հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունների միջև կնքված միաձուլման պայմանագիրը, հաստատել ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի հետևյալ փոխարկման կարգը <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի. ընկերության կողմից տեղաբաշխված թվով 554 /հինգ հարյուր հիսունչորս/ հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական արժեքով հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Նոյեմբերյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության {ԶԱ$^2$ԧԲՔ/ԶԱ$^1$} հատ 5.000 /հինգ հազար/ դրամ անվանական աժեքով հասարակ բաժնետոմսերի, որտեղ ԶԱ$^1$ -ը և ԶԱ$^2$ -ը ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> և ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունների զուտ ակտիվների մեծություններն են, ԲՔ-ն ՀՀ Տավուշի մարզպետարանի <<Նոյեմբերյանի հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի քանակն է, իսկ միջակ { և } փակագծերը առանձնացնում են նրանց մեջ ամփոփված թվի ամբողջ մասը:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

19 մայիսի 2011թ.
ք. Իջևան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետի 19.05.2011 թ.
թիվ 50-Ա որոշմամբ

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»

## փակ բաժնետիրական ընկերության

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(16.05.2011 թ. դրությամբ, մնացորդային արժեք, հազար դրամ)

| ԱԿՏԻՎ | | ՊԱՍԻՎ | |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 259162.0 | Սեփական կապիտալ, այդ թվում՝ | 126848.0 |
| Ոչ նյութական ակտիվներ | 0.0 | կանոնադրական կապիտալ | 31360.0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 0.0 | էմիսիոն եկամուտ | 0.0 |
| Նյութեր | 4833.0 | վերագնահատ. և վերաչափ. տարբեր. | 63726.0 |
| Արագամաշ առարկաներ | 3564.0 | կուտակված շահույթ | (61213.0) |
| Անավարտ արտադրություն | 0.0 | Սեփական կապիտալի այլ տարրեր | 92975.0 |
| Ապրանքներ | 0.0 | Ոչ ընթացիկ պարտավ., այդ թվում՝ | 115621.0 |
| | | Ակտիվներին վերաբերող շնորհներ | 115621.0 |
| Դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ | 12654.0 | Ընթացիկ պարտավ., այդ թվում՝ | 30137.0 |
| տրված ընթացիկ կանխավճարներ | 0.0 | կարճաժամկետ փոխառություններ | 8299.0 |
| հաշվարկներ վաճառքների գծով | 12388.0 | ստացված ընթացիկ կանխավճարներ | 0.0 |
| հաշվարկներ բյուջեի գծով | 0.0 | հաշվարկներ բյուջեի գծով | 880.0 |
| հաշվարկներ սոց. ապահով. գծով | 0.0 | հաշվարկներ սոց. ապահով. գծով | 4336.0 |
| այլ դեբիտորական պարտքեր | 266.0 | հաշվարկներ աշխատավարձի գծով | 8234.0 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 0.0 | այլ կրեդիտորական պարտքեր | 8388.0 |
| Դրամական միջոցներ | 227.0 | Եկամուտներին վերաբերող շնորհներ | 3574.0 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 0.0 | Այլ ընթացիկ պարտավորություններ | 4260.0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 280440.0 | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 280440.0 |

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Տավուշի մարզպետի 19.05.2011 թ.
թիվ 50-Ա որոշմամբ

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»

## փակ բաժնետիրական ընկերության

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(16.05.2011 թ. դրությամբ, մնացորդային արժեք, հազար դրամ)

| ԱԿՏԻՎ | | ՊԱՍԻՎ | |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 9126.8 | Սեփական կապիտալ, այդ թվում՝ | 8531.6 |
| Ոչ նյութական ակտիվներ | 0.0 | կանոնադրական կապիտալ | 2770.0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 0.0 | էմիսիոն եկամուտ | 0.0 |
| Նյութեր | 3672.0 | վերագնահատ. և վերաչափ. տարբ. | 0.0 |
| Արագամաշ առարկաներ | 65.5 | կուտակված շահույթ | 5761.6 |
| Անավարտ արտադրություն | 0.0 | Ոչ ընթացիկ պարտավ., այդ թվում՝ | 7571.9 |
| Ապրանքներ | 0.0 | Ակտիվներին վերաբերող շնորհներ | 7571.9 |
| Դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ | 15322.4 | Ընթացիկ պարտավ., այդ թվում՝ | 8731.2 |
| տրված ընթացիկ կանխավճարներ | 0.0 | հաշվարկներ գնումների գծով | 0.0 |
| հաշվարկներ վաճառքների գծով | 9126.7 | ստացված ընթացիկ կանխավճարներ | 0.0 |
| հաշվարկներ բյուջեի գծով | 492.2 | հաշվարկներ բյուջեի գծով | 7.8 |
| հաշվարկներ սոց. ապահով. գծով | 0.0 | հաշվարկներ սոց. ապահով. գծով | 235.5 |
| այլ դեբիտորական պարտքեր | 5703.5 | հաշվարկներ աշխատավարձի գծով | 3949.7 |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | 0.0 | հաշվարկներ մասնակիցների գծով | 0.0 |
| Դրամական միջոցներ | 67.2 | այլ կրեդիտորական պարտքեր | 4538.2 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 0.0 | Եկամուտներին վերաբերող շնորհներ | 3419.2 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 28253.9 | ՀԱՇՎԵԿՇԻՌ | 28253.9 |